

ԷՆԳԼՎՈՒԴ ՀԻՎԱՆԴԱՆՈՑ և ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ՝ EHMC  
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

**Պարզ լեզվով ամփոփում**

Համաձայն մեր Ֆինանսական օգնության քաղաքականության (տե՛ս ստորև հղումը), բոլոր չապահովագրված հիվանդները, որոնք չեն հաստատվել Medicaid կամ Բարեգործական խնամք ստանալու համար, կարող են ստանալ ֆինանսական օգնություն EHMC-ի կողմից: Այս հիվանդները վճարում են փաստացի ծախսերից որոշակի տոկոս «գեղչված սակագնով», ինչը զգալիորեն նվազեցնում է հիվանդի վճարվելիք հաշվի գումարը: Չապահովագրված հիվանդը չի վճարելու ավելին, քան նախատեսված է գեղչված սակագնով՝ անհապաղ կամ այլ անհրաժեշտ բժշկական օգնություն ստանալու դեպքում:

Չապահովագրված հիվանդը կարիք չունի դիմելու օգնության համար, քանի որ չապահովագրված հիվանդները ինքնաբերաբար համարվում են որակավորված և վճարում են ստորև նշված գեղչված սակագնով: Չկա այլ «որակավորման» չափանիշը, բացի հիվանդի ապահովագրության բացակայությունը և մատուցվող ծառայությունների անհետաձգելի կամ բժշկական տեսանկյունից անհրաժեշտ լինելը:

Այս քաղաքականությունները նաև հասանելի է Էնգլվուդ հիվանդանոցի և բժշկական կենտրոնի վեբ կայքում՝ [www.inglewoodhealth.org](http://www.inglewoodhealth.org)

Ֆինանսական օգնություն վերաբերյալ քաղաքականություն  
Նյու Ջերսի Հիվանդանոցային խնամքի վճարման օգնության ծրագիր  
(Բարեգործական խնամքի)  
Հաշվեգրման և հավաքագրման քաղաքականություն

Վերը նշված քաղաքականության պատճենները նաև հասանելի են գրանցակետերում և EHMC-ի Ֆինանսական խորհրդատվության վարչությունում՝ 350 Engle St. Englewood, NJ 07631:

Վերոհիշյալ ցանկացած քաղաքականության ազատ պատճենը նույնպես կարող եք փոստով ստանալ: Խնդրում ենք զանգահարել (201) 894-3031 և ստանալ պատճենը: Ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ, 9:00-ից՝ 17:00 ընկած ժամանակահատվածում (201) 894-3031 հեռախոսահամարով, և պատրաստ են պա պատասխանելու ֆինանսական օգնության քաղաքականությանն առնչվող հարցերին:

Վերոհիշյալ քաղաքականությունը հասանելի են հետևյալ լեզուներով՝

Անգլերեն  
Իսպաներեն  
Կորեերեն  
Չինարեն  
Ռուսերեն  
Ճապոներեն  
Իտալերեն  
Տազալերեն  
Արաբերեն  
Գուջարաթի  
Հունարեն  
Պորտուգալերեն/Պորտուգալերեն կրեոլ  
Սերբ-խորվատերեն  
Հայերեն

Էնգլվուդ հիվանդանոց և բժշկական կենտրոն		NO.: 400.35
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԻ ՀՐԱՀԱՆԳՆԵՐԻ ԲԱԺԻՆ  Վարչական և տեխնիկական աջակցություն	ԹԵՄԱ՝	ԱՄՄԱԹԻՎ՝ 1/1/2016
	Ֆինանսական օգնություն վերաբերյալ քաղաքականություն	Էջ 1՝ 2-ից
		ՓՈԽԱՐԻՆՈՒՄ Է՝ Նորը
		ՎԵՐԱՆԱՅՎԵԼ Է՝

**ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

Էնգլվուդ հիվանդանոցը և բժշկական կենտրոնը (Englewood Hospital and Medical Center, EHMC) բուժում է բոլոր հիվանդներին, անկախ նրանց վճարունակությունից, տրամադրում է բոլոր տեսակի անհետաձգելի և անհրաժեշտ բժշկական օգնություն: EHMC ընդունել և ընդլայնել է վճարման ուղեցույցները, սահմանված N.J.S.A §26:2H-12.52, «Վճարման սահմանափակումներ որոշ չապահովագրված հիվանդների վրա» (“Limitation on Charges for Certain Uninsured Patients”) և առաջարկում է ֆինանսական օգնություն բոլոր չապահովագրված հիվանդներին անկախ նրանց եկամտից: Այս քաղաքականությունը կիրառվում է բոլոր տեսակի անհրաժեշտ և անհետաձգելի բուժօգնության ծառայությունների վրա, որոնք տրամադրվում են միայն Էնգլվուդ հիվանդանոցում և բժշկական կենտրոնում և չեն տարածվում որևէ մասնագիտական ծառայությունների վրա, որոնք կապված են այն տեսակի խնամքի հետ:

**ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐ**

- 1.) Բոլոր չապահովագրված հիվանդները, որոնց մասնակցությունը Medicaid կամ Charity Care (տե՛ս Նյու Ջերսի Հիվանդանոցային խնամքի վճարման օգնության ծրագիր/Բարեգործական խնամքի քաղաքականություն) ծրագրերին չի հաստատվել, վճարում են իրենց համախառն վճարների տոկոսը: Ըստ նահանգային օրենքի՝ այս իջեցումը հավասարեցվում է EHMC-ի Medicare սակագների 115%-ին: EHMC-ը օգտագործում է ռետրոսպեկտիվ միջոց՝ բաժանելով Medicare-ի վճարումների ամբողջ գումարը Medicare-ի համախառն գումարի նախորդ տասներկու ամիսներին՝ վճարվելիք գումարի որոշելու համար: Բացառությամբ այն դեպքերի, երբ նախապես որոշվում է ինքնուրույն վճարել այնպիսի ընթացակարգերի համար, որոնք չեն համարվում բժշկական անհրաժեշտություն, օրինակ՝ կոսմետիկ վիրաբուժություն:
- 2.) EHMC-ը՝ ըստ IRS կանոնակարգի բաժին 501(r) կետի, համեմատում է տոկոսը, որը որոշված և հաշվարկված է վերը նշված #1-ում, «ռետրոսպեկտիվ» մեթոդի հետ, ինչպես նկարագրված է 501(r) կետում, օգտագործելով բոլոր պահանջների/բողոքների վերաբերյալ տվյալների, և ճշտում է հիվանդի գեղջային տոկոսը երկուսից ավելի մեծ

Էնգլվուդ հիվանդանոց և բժշկական կենտրոն		NO.: 400.35
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԻ ՀՐԱՀԱՆԳՆԵՐԻ ԲԱԺԻՆ  Վարչական և տեխնիկական աջակցություն	ԹԵՄԱ՝	ԱՄՍԱԹԻՎ՝ 1/1/2016
	Ֆինանսական օգնություն վերաբերյալ քաղաքականություն	Էջ 2՝ 2-ից
		ՓՈԽԱՐԻՆՈՒՄ Է՝ Նորը
		ՎԵՐԱՆԱՅՎԵԼ Է՝

թվի հետ: Նման հաշվարկները կատարվում են միասին՝ զեղչային տոկոսը պարզելու համար, որը՝ ըստ 501(r) կետի, կկիրառվի բոլոր չապահովագրված ծառայությունների վրա, այլ ոչ կոնկրետ ծառայության հիման վրա: Այդ հաշվարկները կատարվում են յուրաքանչյուր տար և հաստատվում են ոչ ուշ, քան օրացուցային տարվա ավարտից 60 օր հետո:

- 3.) Չապահովագրված հիվանդը կարիք չունի դիմելու նյութական օգնության համար, քանի որ չապահովագրված հիվանդի բոլոր հաշիվները ավտոմատ կերպով նվազեցվում են մինչև համախառն վճարների տոկոսը, ինչպես նկարագրված է վերև #1-ում: Չկան այլ «որակավորման» չափանիշներ, բացի հիվանդի ապահովագրության բացակայությանը և մատուցվող ծառայությունների անհետաձգելի կամ բժշկական տեսանկյունից անհրաժեշտ լինելը:
- 4.) Եթե հիվանդի ապահովագրական ընկերությունը մերժում է նրա պահանջը հետևյալ պատճառներով՝ սպառված առավելություններ, փորձարարական, բժշկական անհրաժեշտություն, նախկինում գոյություն ունեցող հիվանդություն, չփոխհատուցվող ծախսեր, և այլն, հիվանդը պետք է վճարի համախառն վճարների չփոխհատուցվող տոկոսադրույքը, ինչպես նկարագրված է վերև #1-ում:
- 5.) EPMC-ի միջոցով Նյու Ջերսի Հիվանդանոցային խնամքի վճարման օգնության ծրագրից/Բարեգործական խնամքի ծրագրից օգտվելու նպատակով՝ հայտ ներկայացնելու ընթացակարգերի համար՝ տե՛ս Նյու Ջերսի Հիվանդանոցային խնամքի վճարման օգնության ծրագրի/Բարեգործական օգնության քաղաքականությանը:
- 6.) EPMC-ի հաշվեգրումների և հավաքագրման ընթացակարգերի համար՝ դիմեք Հաշվեգրման և հավաքագրման քաղաքականությանը:
- 7.) Այս քաղաքականությունը հասանելի է Ֆինանսական խորհրդատվության դեպարտամենտում ըստ պահանջի, ինչպես նաև Բժշկական կենտրոնի և ամբողջ EPMC-ի արտագնա կենտրոնների բոլոր գրանցակետերում: Այս քաղաքականությունը նաև հասանելի է Էնգլվուդ հիվանդանոցի և բժշկական կենտրոնի վեբ կայքում՝ [www.inglewoodhealth.org](http://www.inglewoodhealth.org)

Էնգլվուդ հիվանդանոց և բժշկական կենտրոն		NO.: 400.35
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԻ ՀՐԱՀԱՆԳՆԵՐԻ ԲԱԺԻՆ  Վարչական և տեխնիկական աջակցություն	ԹԵՄԱ՝  Ֆինանսական օգնություն վերաբերյալ քաղաքականություն	ԱՄՍԱԹԻՎ՝ 1/1/2016
		Էջ 3՝ 2-ից
		ՓՈԽԱՐԻՆՈՒՄ Է՝ Նորը
		ՎԵՐԱՆԱՅՎԵԼ Է՝

	ՀԱՍՏԱՏՎԵԼ Է՝  Warren Geller, President & CEO

Էնգլվուդ հիվանդանոց և բժշկական կենտրոն		NO.: 400.34
<b>ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԻ ՀՐԱՀԱՆԳՆԵՐԻ ԲԱԺԻՆ</b>  Վարչական և տեխնիկական աջակցություն	ԹԵՄԱ՝	ԱՄՄԱԹԻՎ՝ 1/1/2016
	Նյու Ջերսի Հիվանդանոցային խնամքի վճարման օգնության ծրագրի (Բարեգործական խնամքի) քաղաքականություն	Էջ 1՝ 4-ից
		ՓՈԽԱՐԻՆՈՒՄ Է՝ Նորը
		ՎԵՐԱՆԱՅՎԵԼ Է՝

**ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

Էնգլվուդ հիվանդանոցը և բժշկական կենտրոնը (Englewood Hospital and Medical Center, EHMC) բուժում է բոլոր հիվանդներին, անկախ նրանց վճարունակությունից, տրամադրում է բոլոր տեսակի անհետաձգելի և անհրաժեշտ բժշկական օգնություն: EHMC-ը հետևում է Նյու Ջերսի Հիվանդանոցային խնամքի վճարման օգնության ծրագրի (Բարեգործական խնամքի) կանոնակարգին, որը սահմանվել է Նյու Ջերսիի Առողջապահության և սոցիալական ծառայությունների դեպարտամենտի կողմից:

Նյու Ջերսի Հիվանդանոցային խնամքի վճարման օգնության ծրագիրը (Բարեգործական խնամքը) անվճար կամ նվազեցված սակագներով ծառայություններ է մատուցում այն հիվանդներին, որոնք ստանում են ստացիոնար և ամբուլատոր անհետաձգելի և անհրաժեշտ բժշկական օգնություն: Այս ծրագիրը ներառում է միայն հիվանդանոցում մնալու ծախսերը և չի տարածվում մասնագիտական ծառայությունների վճարների վրա:

**ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐ**

- 1.) Նյու Ջերսի Հիվանդանոցային խնամքի վճարման օգնության ծրագիրը (Բարեգործական խնամքը) նաև հասանելի է Նյու Ջերսիի բնակիչների համար, որոնք
  - a.) Չունեն բժշկական ապահովագրություն կամ այն վճարում է հաշիվների միայն մի մասը, և
  - b.) Իրավունք չունեն ստանալու որևէ մասնավոր կամ պետական հովանավորվող բժշկական ապահովագրություն (օրինակ՝ Medicaid), և
  - c.) Համապատասխանում են և եկամուտների, և ակտիվների իրավասության չափանիշներին:
  
- 2.) Նյու Ջերսի Հիվանդանոցային խնամքի վճարման օգնության ծրագիրը (Բարեգործական խնամքը) նաև հասանելի է Նյու Ջերսիի ոչ բնակիչների համար, հաշվի առնելով կոնկրետ դրույթներ՝

Էնգլվուդ հիվանդանոց և բժշկական կենտրոն		NO.: 400.34
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԻ ՀՐԱՀԱՆԳՆԵՐԻ ԲԱԺԻՆ  Վարչական և տեխնիկական աջակցություն	ԹԵՄԱ՝	ԱՄՍԱԹԻՎ՝ 1/1/2016
	Նյու Ջերսի Հիվանդանոցային խնամքի վճարման օգնության ծրագրի (Բարեգործական խնամքի) քաղաքականություն	Էջ 2՝ 4-ից
		ՓՈԽԱՐԻՆՈՒՄ Է՝ Նորը
		ՎԵՐԱՆԱՅՎԵԼ Է՝

3.) Նյու Ջերսի Առողջապահության և սոցիալական ծառայությունների դեպարտամենտի (HHS) կողմից սահմանված եկամտի մակարդակի չափանիշները հետևյալ են՝

<u>Եկամուտ տոկոսի տեսքով՝ ստացած HHS աղքատության եկամտի ուղեցույցներից</u>	<u>Հիվանդի կողմից վճարված վճարման տոկոս</u>
--	---

Ավելի քիչ կամ հավասար է՝ 200%	0%
Ավելի քան 200%, բայց ավելի քիչ կամ հավասար է՝ 225%	20%
Ավելի քան 225%, բայց ավելի քիչ կամ հավասար է՝ 250%	40%
Ավելի քան 250%, բայց ավելի քիչ կամ հավասար է՝ 275%	60%
Ավելի քան 275%, բայց ավելի քիչ կամ հավասար է՝ 300%	80%
Ավելի քան 300%	100%

4.) Եթե հիվանդները 20%-ից՝ 80% շարժվող սանդղակով պատասխանատու են և որակավորվել են ինքնուրույն վճարել բժշկական ծախսերի համար, որոնք գերազանցում են համախառն տարեկան եկամտի 30%-ը (այսինքն՝ այլ անձանց կողմից չվճարված հաշիվները), ապա գումարը, որը գերազանցում է 30%, ճանաչվում է, որպես Հիվանդանոցային խնամքի վճարման օգնություն (Բարեգործական խնամք):

5.) Նյու Ջերսի Առողջապահության և սոցիալական ծառայությունների դեպարտամենտի (HHS) կողմից սահմանված ակտիվների չափանիշները հետևյալ են՝

Անհատական և ընտանեկան ակտիվները պետք է լինեն հավասար կամ ավելի ցածր, քան Նյու Ջերսի նահանգի Առողջապահության և սոցիալական ծառայությունների դեպարտամենտի կողմից սահմանված շեմը՝ Նյու Ջերսի Հիվանդանոցային խնամքի վճարման օգնության ծրագրի (Բարեգործական խնամքի) համար իրավասու լինելու: Ակտիվների շեմը գերազանցելու դեպքում, հիվանդը կարող է «ծախսել ակտիվների ավելցուկը» թույլատրելի սահմաններում՝ օգտագործել ավելցուկը հիվանդանոցային հաշիվը և այլ հաստատված անհատական բժշկական ծախսեր վճարելու համար:

Էնգլվուդ հիվանդանոց և բժշկական կենտրոն		NO.: 400.34
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԻ ՀՐԱՀԱՆԳՆԵՐԻ ԲԱԺԻՆ  Վարչական և տեխնիկական աջակցություն	ԹԵՄԱ՝	ԱՄՄԱԹԻՎ՝ 1/1/2016
	Նյու Ջերսի Հիվանդանոցային խնամքի վճարման օգնության ծրագրի (Բարեգործական խնամքի) քաղաքականություն	Էջ 3՝ 4-ից
		ՓՈԽԱՐԻՆՈՒՄ Է՝ Նորը
		ՎԵՐԱՆԱՅՎԵԼ Է՝

6.) Դիմումի գործընթացը

Հիվանդները կարող են դիմել Նյու Ջերսի Հիվանդանոցային խնամքի վճարման օգնության ծրագրի (Բարեգործական խնամքի) համար՝ զանգահարելով ֆինանսական խորհրդատվության դեպարտամենտ (201) 894-3031 հեռախոսահամարով և խնդրել որպեսզի իրենց փոստով ուղարկվի դիմում-հայտի ձևը: Նրանք կարող են նաև անձամբ դիմել Ֆինանսական խորհրդատվության դեպարտամենտ: Հիվանդներին կխնդրեն տրամադրել տեղեկանք եկամուտների և ակտիվների մասին, վճարման անդորրագրերի պատճեններ, բանկային քաղվածքներ, հարկային հայտարարագրեր և այլն: Ծառայության տրամադրման օրվանից, հիվանդները ունեն մինչև մեկ տարի ժամկետ՝ Նյու Ջերսի Հիվանդանոցային խնամքի վճարման օգնության (Բարեգործական խնամքի) համար դիմելու: Հիվանդներին տրվում է Բարեգործական խնամքի որոշումը/քարտը, որտեղ նշվում է դիմումը արդյունքը:

7.) Հիվանդները, որոնք դիմում են Նյու Ջերսի Հիվանդանոցային խնամքի վճարման օգնության (Բարեգործական խնամքի) համար, պետք է անցնեն ստուգում՝ պոտենցիալ իրավասությունը պարզելու համար՝ ցանկացած երրորդ կողմից ապահովագրական նպաստներ ստանալու կամ բժշկական օգնության ծրագրերին մասնակցելու (օրինակ՝ Medicaid) վերաբերյալ, որոնք կարող են վճարել հիվանդանոցային հաշվի համար: Հիվանդները կարող են ճանաչվել ոչ իրավասու Հիվանդանոցային խնամքի վճարման օգնության (Բարեգործական խնամքի) համար, քանի դեռ նրանք համարվում են ոչ իրավասու ցանկացած այլ բժշկական օգնության ծրագրերի համար:

8.) EPMC-ի բժշկական կենտրոնի վայրերում առնվազն շաբաթը երեք օր գործում է սոցիալական ծառայությունների Bergen County Board աշխատակիցը՝ Medicaid-ի հայտադիմումների հետ կապված օգնելու համար այն հիվանդներին, ովքեր իրավասու են Medicaid ստանալու:

9.) EPMC Ֆինանսական օգնության ուղեցույցների համար՝ տե՛ս Ֆինանսական օգնության քաղաքականությունը:



Էնգլվուդ հիվանդանոց և բժշկական կենտրոն		NO.: 400.34
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԻ ՀՐԱՀԱՆԳՆԵՐԻ ԲԱԺԻՆ  Վարչական և տեխնիկական աջակցություն	ԹԵՄԱ՝	ԱՄՍԱԹԻՎ՝ 1/1/2016
	Նյու Ջերսիի Հիվանդանոցային ինսամբի վճարման օգնության ծրագրի (Բարեգործական ինսամբի) քաղաքականություն	Էջ 4՝ 4-ից
		ՓՈԽԱՐԻՆՈՒՄ Է՝ Նորը
		ՎԵՐԱՆԱՅՎԵԼ Է՝

<p>10.) EHMC-ի հաշվեգրումների և հավաքագրման ընթացակարգերի համար՝ տե՛ս Հաշվեգրման և հավաքագրման քաղաքականությանը:</p> <p>11.) Այս քաղաքականությունը հասանելի է Ֆինանսական խորհրդատվության դեպարտամենտում ըստ պահանջի, ինչպես նաև Բժշկական կենտրոնի և ամբողջ EHMC-ի արտագնա կենտրոնների բոլոր գրանցակետերում: Այս քաղաքականությունը նաև հասանելի է Էնգլվուդ հիվանդանոցի և բժշկական կենտրոնի վեբ կայքում՝ <a href="http://www.inglewoodhealth.org">www.inglewoodhealth.org</a></p>	
	<p>ՀԱՍՏԱՏՎԵԼ Է՝</p> <p>Warren Geller, President &amp; CEO</p>

Էնգլվուդ հիվանդանոց և բժշկական կենտրոն		NO.: 400.36
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԻ ՀՐԱՀԱՆԳՆԵՐԻ ԲԱԺԻՆ  Վարչական և տեխնիկական աջակցություն	ԹԵՄԱ՝	ԱՄՄԱԹԻՎ՝ 1/1/2016
	Հաշվեգրման և հավաքագրման քաղաքականություն	Էջ 1 3-ից
		ՓՈԽԱՐԻՆՈՒՄ Է՝ Նորը
		ՎԵՐԱՆԱՅՎԵԼ Է՝

### ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Էնգլվուդ հիվանդանոցը և բժշկական կենտրոնը (Englewood Hospital and Medical Center, EHMC) բուժում է բոլոր հիվանդներին, անկախ նրանց վճարունակությունից, տրամադրում է բոլոր տեսակի անհետաձգելի և անհրաժեշտ բժշկական օգնություն: Այս քաղաքականությունը վերաբերում է միայն Էնգլվուդ հիվանդանոցի և բժշկական կենտրոնի հաշվեգրման և հավաքագրման բոլոր տեսակի գործունեություններին և չի տարածվում որևէ մասնագիտական ծառայության հաշվեգրման և հավաքագրման գործունեությունների վրա:

### ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐ

- 1.) Բոլոր ապահովագրված հիվանդների հաշիվները կուղարկվեն անմիջապես EHMC-ից՝ հիվանդի ապահովագրական ընկերությանը: Եթե հիվանդի ապահովագրական ընկերությունը մերժում է պահանջը հետևյալ պատճառներով՝ սպառված առավելություններ, փորձարարական, բժշկական անհրաժեշտություն, նախկինում գոյություն ունեցող հիվանդություն, չփոխհատուցվող ծախսեր, և այլն, հիվանդը պետք է վճարի համախառն վճարների չփոխհատուցվող տոկոսադրույքը, ինչպես հակիրճ շարադրված է Ֆինանսական օգնության քաղաքականության մեջ:
- 2.) Եթե հիվանդի ապահովագրական ընկերությունը վճարում է հայցի համար, և հիվանդի վճարվելիք գումարը կազմված է չփոխհատուցվող նվազեցման գումարից, համավճարից, կամ համատեղ ապահովագրական գումարից, ապա EHMC-ը կներկայացնի հաշիվը հիվանդին նշված գումարի չափով՝ որպես հիվանդի պատասխանատվության ապահովագրական ընկերության առջև:
- 3.) Չապահովագրված հիվանդների հաշիվները կրճատվում են մինչև համախառն վճարների տոկոսադրույքը, ինչպես նկարագրված է Ֆինանսական օգնության քաղաքականության մեջ:
- 4.) Հիվանդների կատանան հաշվեգրման ծանուցումներ և հավաքագրման նամակներ EHMC-ի կողմից՝ բոլոր տեսակի մնացորդների վերաբերյալ, որոնք համարվում են

Էնգլվուդ հիվանդանոց և բժշկական կենտրոն		NO.: 400.36
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԻ ՀՐԱՀԱՆԳՆԵՐԻ ԲԱԺԻՆ  Վարչական և տեխնիկական աջակցություն	ԹԵՄԱ՝  Հաշվեգրման և հավաքագրման քաղաքականություն	ԱՄՍԱԹԻՎ՝ 1/1/2016
		Էջ 2 3-ից
		ՓՈԽԱՐԻՆՈՒՄ Է՝ Նորը
		ՎԵՐԱՆԱՅՎԵԼ Է՝

- հիվանդի պատասխանատվությունը: Հաշվեգրման ծանուցումները և հավաքագրման նամակները ներառում են տեղեկատվություն ֆինանսական օգնության առկայության մասին:
- 5.) Ֆինանսական խորհրդատվության դեպարտամենտի աշխատակիցները կփորձեն կապ հաստատել հիվանդի հետ հեռախոսի միջոցով՝ \$5,000 կամ ավելի չվճարված մնացորդների դեպքում, որոնք համարվում են հիվանդի պատասխանատվություն: Հիվանդի հետ զրուցելուց, նրանք կպատմեն ֆինանսական օգնության առկայության մասին: Բոլոր զանգերը են փաստագրվում են ֆինանսական համակարգում:
  - 6.) Ի լրումն ֆինանսական օգնության, հիվանդներին կառաջարկվեն վճարման պլաններ: Հիվանդները կարող է կատարել ամսական վճարումները չվճարված մնացորդների վրա: Վճարման պլանները հաստատվում են մեկ տարի ժամկետով: Վճարման պլանները, որոնք նախատեսվում են մեկ տարուց ավելի ժամկետով, պետք է հաստատված լինեն Ֆինանսական խորհրդատվության կառավարչի կողմից:
  - 7.) Բոլոր չվճարված մնացորդները, որոնք համարվում են հիվանդների վճարվելիք գումար, կուղարկվեն արտաքին հավաքագրման գործակալություններին՝ EPMC-ի անհաջող փորձերից հետո: Հավաքագրման գործակալությունները կփորձեն ստանալ վճարումը հիվանդից: Եթե ամբողջ վճարումը չի ստացվել, ապա հավաքագրման գործակալությունները կտեղեկացնեն հիվանդին փոստով այն մասին, որ նրանք կարող են դիմել արտահերթ հավաքագրման գործողությունների (extraordinary collection actions, ECA), ինչպես սահմանված է IRS բաժնի 501(r) կետում, այն կարող է ներառել դատական գործերի հարուցում, որոնք ընդգրկում են կալանք աշխատավարձի, բանկային հաշիվների և Նյու Ջերսի նահանգում հիվանդին պատկանող անշարժ գույքի վրա: Հավաքագրման գործակալությունները առնվազն 30 օր առաջ պետք է գրավոր տեսքով տեղեկացնեն հիվանդին՝ մինչև ԱՀԳ նախաձեռնելը: Հավաքագրման գործակալությունները կփորձեն խուսափել ԱՀԳ-ներից մինչև առնվազն 120 օր՝ EPMC-ի կողմից առաջին հետ-դուրսգրման հաշվեգրման ծանուցումը ուղարկելուց հետո:
  - 8.) Բոլոր ուղղորդումները արտաքին հավաքագրման գործակալությունների, հաստատվում են Ֆինանսական խորհրդատվության կառավարչի կողմից:

Էնգլվուդ հիվանդանոցի և բժշկական կենտրոն		NO.: 400.36
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԻ ՀՐԱՀԱՆԳՆԵՐԻ ԲԱԺԻՆ  Վարչական և տեխնիկական աջակցություն	ԹԵՄԱ՝	ԱՄՍԱԹԻՎ՝ 1/1/2016
	Հաշվեգրման և հավաքագրման քաղաքականություն	Էջ 3 3-ից
		ՓՈԽԱՐԻՆՈՒՄ Է՝ Նորը
		ՎԵՐԱՆԱՅՎԵԼ Է՝

<p>9.) EPMC Ֆինանսական օգնության ուղեցույցների համար՝ տե՛ս Ֆինանսական օգնության քաղաքականությունը:</p> <p>10.) EPMC միջոցով Նյու Ջերսի Հիվանդանոցային խնամքի վճարման օգնության ծրագրից/Բարեգործական խնամքի ծրագրից օգտվելու նպատակով՝ հայտ ներկայացնելու ընթացակարգերի համար՝ տե՛ս Նյու Ջերսի Հիվանդանոցային խնամքի վճարման օգնության ծրագրի/Բարեգործական օգնության քաղաքականությունը:</p> <p>11.) Այս քաղաքականությունը հասանելի է Ֆինանսական խորհրդատվության դեպարտամենտում ըստ պահանջի: Այս քաղաքականությունը նաև հասանելի է Էնգլվուդ հիվանդանոցի և բժշկական կենտրոնի վեբ կայքում՝ <a href="http://www.inglewoodhealth.org">www.inglewoodhealth.org</a></p>	
	<p>ՀԱՍՏԱՏՎԵԼ Է՝</p> <p>Warren Geller, President &amp; CEO</p>